# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ........................................ 3

1. ՈՒՆԿՆԴՐՈՒՄԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ........................................ 6

1.1. Ունկնդրումը որպես խոսքային գործունեության տեսակ ........................................ 6

1.2. Գրական ստեղծագործության ունկնդրումը առաջին դասարանում ........................................ 7

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ ........................................ 21

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ........................................ 23

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ........................................ 25

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Թեմայի արդիականությունը:** Գրական ունկնդրումը երեխայի հնարավորություն է ընձեռում հարստացնել ճանաչողական գործունեության հիմնական փորձը, զարգացնել տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները: Ուսուցիչը կարդում է գրական ստեղծագործություններ, իսկ աշակերտը, հասկանալով ընթերցանությունը, ակտիվացնում է մտածական գործընթացները, ինչը կարևոր նախապայման դառնում երեխաների արդյունավետ ուսուցման և ուսումնառության համար:

Գրականությունն այսօր և՛ որպես հասարակության հոգեբարոյական կյանքի գոյության փաստ, և՛ որպես դպրոցական առարկա այն բարոյական հիմքն ու մաքուր ակունքն է, որը սնում է մարդկանց հոգևոր աշխարհը: Բարոյական համոզմունքները բուռն կերպով են ձևավորվում մանկական տարիքում: Սա նշանակում է, որ հատկապես դպրոցում պետք է արթնացնել, իսկ հետո նաև ձևավորել ընթերցանության նկատմամբ երեխաների հետաքրքրությունն ու սերը, զարգացնել գեղեցիկի, գրական խոսքի խորության ընկալման կարողությունը և դրա բարոյական ներգործության ուժը:

Գրական ունկնդրման ժամերին սովորողների բարոյական դաստիարակության խնդիրների լուծման գլխավոր պայմանը սովորողների՝ գրական ստեղծագործությունը խորությամբ հասկանալու, վերլուծելու կարողությունն է: Մայրենի լեզվի դասերին աշակերտները ուսուցչի ղեկավարությամբ կարդում են գրական

ստեղծագործություններ: Ստեղծագործական գեղագիտական և բարոյական արժեքներն ընկալելու համար անհրաժեշտ է,որ.

- խորհեն ընթերցածի շուրջ,
- ապրումակցեն հերոսներին,
- գնահատեն նրանց արարքները,
- իմաստավորեն նրանց խնդիրները,
- համեմատեն իրենց կյանքը գրական կերպարների կյանքի հետ,
- ձգտեն կատարել իրենց ընկալած բարոյական նորմերին համապատասխան արարքներ:

Ընթերցելով և վերլուծելով ստեղծագործությունները` երեխան պետք է խորհրդածի ճշմարիտի և սխալի,բարու և չարի,սիրո և ատելության,մարդու հնարավորությունների և աշխարհում նրա տեղի մասին: Կյանքում նշված խնդիրների լուծմանը էապես կնպաստի գրական ստեղծագործությունների ինքնուրույն ընթերցանությունը,իսկ ուսուցիչը ուղղորդողի դեր կկատարի այդ գործընթացքում:

Այսպես` դիտարկենք գրական ունկնդրման դերը առաջին դասարանում:

**Թեմայի նպատակը և խնդիրները:**Մեր աշխատանքի նպատակն է ուսումնասիրել գրական ունկնդրման դասերը հանրակրթական դպրոցի առաջին դասարանի ուսուցման գործընթացում:

Աշխատանքի խնդիրներն են`

•Բացահայտել ՀՀ հանրակրթական դպրոցում աշակերտների ունկնդրողական հմտությունները,

•Ուսումնասիրել գրականության ուսուցման ունկնդրմանը վերաբերվող դրույթները,

•Մշակել առաջին դասարանի դասերի ժամանակ ունկնդրման ուսուցումը խթանող առաջադրանքներ:

# 1.ՈՒՆԿՆԴՐՈՒՄԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

## 1.1.Ունկնդրումը որպես խոսքային գործունեության տեսակ

Ունկնդրումը որպես խոսքային գործունեության տեսակ ունի հետևյալ առանձնահատկությունները:

Իբրև գործունեության առարկա հանդես է գալիս ուրիշի միտքը,իբրև արդյունք՝ այդ միտքը հասկանալը:

Մեթոդական և հոգեբանական գականության մեջ ունկնդրումը՝ խոսքը լսելով հասկանալը, դիտվում է որպես բարդ վերլուծահամադրական միասնական գործունեություն, որը ներառում է ինֆորմացիայի մշակման պերցեպտիվ և իմաստային օղակները[1]:

Ունկնդրման առանձնահատկությունները բնորոշելիս անհրաժեշտ է տարբերակել երկու կողմ. Ընկալում՝ հնչյունական պատկերի ինֆորմացիոն տարբերակիչ գծերի առանձնացում և ճանաչում՝ ձևավորված հնչյունական պատկերի տարբերակում՝ որոշակի էտալոնի համեմատելու հիման վրա[2]:

Ունկնդրման գործընթացին մասնակցում են լսողական և խոսքաշարժողական զգայարանները:

Լսելով ուրիշի խոսքը ունկնդրողը լսողական պատկերները և հնչյունային կառուցվածքները շարժողական զգայարանների միջոցով վերափոխում է արտասանականի:

Տեսողական զգայարանի մասնակցությունը ունկնդրման գործընթացին, նկատելիորեն նպաստում է խոսքը հասկանալուն:Ներքին խոսքը կարևոր է հասկանալու համար: Նույնիսկ

---

[1] Гез Н. И. Методика обучения иностранным языкам в высшей школе. М. 1979, էջ 4

[2] Гез Н. И. Методика обучения иностранным языкам в высшей школе. М. 1979, էջ 5

արհեստական խոչընդոտների պայմաններում այն հնարավորություն է ընձեռում ընկալել խոսքային հաղորդումը, կանխատեսել և ընդհանրացնել այն: Սկսնակի մոտ ներքին խոսքն ընթանում է ընդլայնված կերպով: Հաջորդաբար նրա մոտ նկատվում է ներքին խոսքի խտացում: Հանրահայտ է , որ ունկնդրման գործընթացը կազմված է բազմաթիվ օղակներից,որոնք բոլորն էլ գործում են միաժամանակ: Ունկնդրման օղակների համաձուլությունը բացատրվում է հոգեբանական տարբեր գործոնների միասնականությամբ:

Բնորոշելով ճանաչման յուրահատկությունները Վ.Ի. Զինչենկոն նկատում է, որ այն մեծ մասամբ չի կրում ընդլայնված գիտակցական բնույթ,որը նկատբում է միայն պատկերի ստեղծման սկզբնական փուլում: Նյութին ծանոթանալուն առընթեր ճանաչման գործընթացը փոխվում է,կրելով միաժամանակյա ակնթարթային բնույթ[3]:

## 1.2.Գրական ստեղծագործության ունկնդրումը առաջին դասարանում

Տարրական դասարանների աշակերտների խոսքի զարգացման համար անհրաժեշտ երեք բաղադրիչների՝ բառապաշարի. հարստացման ու կատարելագործման, խոսքի արտահայտչականության՝ առոգանության և տրոհության պահպանման և լավ պատմելու կարողության մշակման աշխատանքները պետք է իրականացնել միաժամանակ, միմյանց հետ

[3] Зинченко В. П. В восприятие как действиея Международный психологический конгрессб симпозиум 30, 1966 է ջ 61

սերտորեն կապված[4]: Իսկ դրա լավագույն միջոցը կապակցված խոսքն է՝ երեխաներին խոսեցնելը, տեսածի, լսածի ու զգացածի մասին պատմելը: Խոսելու, արտահայտվելու կամ պատմելու ընթացքում որոշակիորեն դրսևորվում է երեխայի բառապաշարը,խոսքի արտահայտչականությունն ու պատմելու կարողությունը, և այն, ինչ թերի է, ուսուցիչն ուղղում, շտկում ու կատարելագործում է կոնկրետ լեզվական նյութի վրա: Ասել է թե՝ ընթերցված նյութի վերարտադրության առաջին փուլը անմիջականորեն առնչվում է կարդալու ուսուցման տեխնիկային:Կարդալու կարողության շնորհիվ է զարգանում պատմելու մեթոդիկան, քանի որ ընթերցանության դասերին ամենակարևորը կարդացածը հասկանալն է:

Առաջին դասարանում գրական ունկնդրման նյութ կարող են դառնալ հեքիաթը, բանաստեղծությունը և այլն: Օրինակ՝ բոլոր երեխաներն էլ սիրում են հեքիաթներ լսել ու կարդալ: Հեքիաթի բովանդակության հետաքրքրաշարժությունը, դեպքերի զարգացման հաջորդականությունը, հերոսների բնավորության գծերի հստակությունը, պարզությունը, հաճախակի կրկնվող սկիզբն ու բազմաթիվ արտահայտությունները, հաճելի ավարտը, մատչելի գաղափարն ու ենթատեքստը հեշտացնում են հեքիաթի ընթրցումն ու այն դարձնում ցանկալի:Բացի դրանից՝ մեծ է հեքիաթի դաստիարակչական նշանակությունը: Այն ներկայացնում է բարոյական արժեքներ ու սկզբունքներ, որոնք ներկայացվում են ոչ թե որպես խրատ ու քարոզ, այլ արտահայտվում են

[4] **Ս. Խաչատրյան**, Արտահայտիչ ընթերցանության և բանավոր խոսքի ուսուցումը տարրական դասարաններում,«Նախաշավիղ» հանդես,Երևան, 1.2013,էջ 4-5:

հերոսների արարքներով, խոսքերով: Հենց այդ հանգամանքն էլ ուժեղացնում է երեխայի հոգու, զգացմունքների ու համոզմունքների վրա թողնվող ազդեցությունը:

Հեքիաթը կարևոր տեղ ունի ոչ միայն առաջին դասարանի, այլև առհասարակ տարրական դասարանների մայրենի լեզվի ընթերցարաններում, քանի որ հեքիաթն ունի դաստիարակչական մեծ արժեք, այն միևնույն ժամանակ կապակցված խոսքի զարգացման արդյունավետ միջոց է[5]: Այս առումով հեքիաթի ունկնդրումը նպատակաուղղված նշանակություն է ստանում:Գրական ունկնդրման միջոցով երեխան ըմբռնում է բարու և չարի գործոնը ոչ միայն հեքիաթում, այլև կյանքում, առօրյայում: Հեքիաթի վերջում բարու հաղթանակը կոգևորի նրան՝ կատարելու բարի գործեր և հասկանալու,որ հաղթանակի բերկրանքը հեշտությամբ չի տրվում: Այսինքն՝ հեքիաթը պետք է մեկնաբանվի, իմաստավորվի իրենց իսկ կյանքի օրինակով:

Հեքիաթը երեխային օգնում է խորասուզվել մտքերի ծովը, կենդանի մտապատկերներով վերամարմնավորել բնության անսովոր ու հանդիսավոր երևույթները, առեղծվածային ուժերը և ներմուծել դրանք երկրային իրական կյանք:Հեքիաթի միջոցով երեխան հստակեցնում է աշխարհի կերպարն իր մտապատկերում ու հոգում, որոշում իր տեղն ու դերը այս աշխարհում: Այդ հարցում նրան օգնում է ուսուցիչը: Նա պետք է ուղղորդի երեխային մտքի ու հոգու ճանապարհով: Հեքիաթի միջոցով երեխան հասկանում է, որ թագավորն էլ կարող է բարի,ազնիվ ու իմաստուն լինել, աղքատն էլ, որը լիաչք, բարեսիրտ ու

---

[5] **Ջ.Գյուլամիրյան**,Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա,Երևան ,2006,էջ 160:

աննախանձ է: Նա անտրտունջ կրում է իր տառապանքները:Անվրեժ է չարի դեմ:

Հեքիաթի միջոցով երեխան գիտակցում է այն հանգամանքը, որ ոչ աղքատությունը, ոչ որբությունը,ոչ ձախորդությունը արատներ չեն: Հարկավոր է երեխային բացատրել և ցույց տալ այդ երևույթները՝ իրական կյանքի օրինակներով, առանց վերամբարձ խրատաբանության:Այդ կերպ են վերհանում հեքիաթի բարոյախոսությունը:

Չարին հաղթելու համար մարդն օգնության է կանչում իրենից դուրս գտնվող բնության ուժերին:Վերմարդկային ուժերը հրաշագործ են: Երեխան պետք է ճանաչի բնության երևույթները, ընկալի հրաշք բնության կերպարանափոխության զորությունը:

Իրապատում հեքիաթն անդրադարձ է մարդու կողմից մարդկային հարաբերություններին, մարդկային հասարակության ճանաչողությանը, դիտարկման, հոգեբանական վերլուծության և կենսափորձի կերպավորման միջոցով:Իրապատում հեքիաթի մեջ գերակշռում է մարու մեջ առկա հրաշագործ ուժերի հնարանքը:

Նման հեքիաթների մեջ պետք է ցույց տալ ,որ հրաշքը ոչ թե բնության տարերային ուժերի մեջ է թաքնված, այլ մարդու ներքին ուժերի և հնարավորությունների:

Այսպիսով՝ հեքիաթի ունկնդրումը առաջին դասարանում շատ կարևոր է այն առումով, որ երեխայի միտքը մաքուր է,ուստի և նրան հասու են բոլոր հեքիաթային, երկնային ու երկրային գանձերը:Երեխան հավատում է հրաշքին:

Հեքիաթի ունկնդրումը առաջին դասարանում սովորաբար ուղեկցվում է չորս քայլով.

1. հեքիաթի ընթերցում՝ բովանդակության ամբողջական ընկալման նպատակով,

2. հեքիաթի երևակայական կողմի բացահայտում,
3. հեքիաթի բարոյախոսական իմաստի վերհանում,
4. հեքիաթի լեզվի վերլուծություն:

Հեքիաթի ուսումնասիրությունը իրականացվում է, ինչպես պատմվածքինը, այսինքն՝ որպես գեղարվեստական ստեղծագործություն: Սա նշանակում է՝ դասը պիտի իրականացվի բացատրական ընթերցանության մեթոդի բոլոր բաղադրամասերի կիրառմամբ:

Բացատրական ընթերցանության մեթոդի բոլոր բաղադրիչներով հեքիաթը ուսումնասիրելուց հետո պիտի անցնել նրա բովանդակության երևակայական կողմի բացահայտմանը: Սակայն, նշենք, որ այդ ամենը չպետք է բացահայտ կերպով անել, այլապես հեքիաթը կդադարի նպաստել երեխաների երևակայության բացահայտմանը: Նախ անհրաժեշտ է, որ երեխաներն իրենք որոշեն, թե իրենց կարդացած կամ լսած հեքիաթում նկարագրված դեպքերից որոնք կարող են կատարվել իրականում, որոնք անիրական են, մտացածին և այլն:

Հեքիաթի շուրջ տարվող աշխատանքների շրջանում պիտի կարևորել հերոսների այն արարքները, որոնց շուրջ զարգանում են հեքիաթի դեպքերը: Դրանց միջոցով են որոշվում գլխավոր հերոսի արարքների դրդապատճառները, հեքիաթի տրամաբանությունն ու գլխավոր գաղափարը:

Այսպիսի վերլուծության արդյունքը պետք է դառնա հեղինակի դիրքորոշման ըմբռնումն ու ընթերցողի վերաբերմունքի ձևավորումը ընթերցածի բովանդակության նկատմամբ: Հիմք ընդունելով բովանդակային բաղադրիչները՝ անհրաժեշտ է նախ երեխաների ուշադրությունը հրավիրել որոշակի բառերի ու

արտահայտությունների վրա, քանի որ բառերի միջոցով է առաջին հերթին հնարավոր որոշել հերոսի հոգեվիճակը, նրա արարքների դրդապատճառները, հերոսի ինչպիսին լինելը, հեղինակի վերաբերմունքը նրանկատմամբ և այլն: Օրինակ՝ «Աղվեսն ու արագիլը» հեքիաթն ընթերցելիս կարելի է տալ հետևյալ հարցը՝ինչու այդպես վարվեց արագիլի հետ (ճաշը լցրեց տափակ պնակի մեջ): Աշակերտներին օգնելու համար կարելի է տալ պատասխանների խումբ՝թողնելով,որ նրանք ընտրեն իրենց համար ընդունելի պատասխանը:

Հաջորդ խնդիրը,որ պետք է կարևորվի հեքիաթի ուսուցման ժամանակ, նրա ժանրային առանձնահատկությունների շուրջտարվողաշխատանքն է:Մի քանի հեքիաթների լեզուն, ժանրային առանձնահատկությունները համեմատելով՝ կարելի է նրանց միջև ընդհանրություններ ու տարբերություններ գտնել, երեխաների ուշադրությունը հրավիրել հեքիաթի կառուցվածքային առանձնահատկությունների, մասնավորապես հեքիաթի սկզբի,վերջի վրա:

Հեքիաթը պատմել սովորեցնելիս կարելի է օգտագործել նաև ուսուցչի ու աշակերտների կազմած նկարներով պլանը: Սա պատմելու ուսուցման շրջանի առաջին փուլն է: Հեքիաթի վերարտադրումը կարելի է իրականացնել ինչպես շարունակելով, այնպես էլ ընտրովի, շարքերով, խմբերով,դերերով և այլն:Պիտի հանձնարարել,որ երեխաները անգիր սովորեն այն չափածո տողերը, որոնք հաճախ կրկնվում են հեքիաթներում, և պատմելիս անգիր արտասանեն դրանք:

Հեքիաթի ուսուցման դասի մեթոդական շղթան ընդգրկում է հետևյալ քայլերը.

- նախապատրաստական զրույց հեքիաթի թեմայի շուրջ,
- հեքիաթի ամբողջական ընթերցում,
- հեքիաթի ընթերցում,
- աշխատանք հեքիաթի երևակայական կողմի, հիմնական մտքի, դաստիարակչական գաղափարի բացահայտման, ենթատեքստի կռահման ուղղությամբ,
- պատմել ու նախապատրաստում,պատմում,
- ամփոփում:

Նույն հիմունքով պետք է իրականացնել գրական մյուս ստեղծագործությունների ունկնդրումը:

Ունկնդրած ստեղծագործության գաղափարի բացահայտման ուղղությամբ աշխատանքն իրականացնելիս պիտի նկատի ունենալ ,որ կրտսեր դպրոցականները ունեն դեպքերը սեփական տեսանկյունից տեսնելու և դիտարկելու ունակություն: Սակայն նրանք հակված են նաև իրավիճակները ուրիշների տեսանկյունից ընկալելու ունակություն: Այդ իսկ պատճառով ուսուցիչը դասարանում պետք է ստեղծի վստահելի մթնոլորտ. աշակերտները պետք է մտածեն ազատ, արտահայտվեն համարձակ[6]:

Ունկնդրած ստեղծագործության գաղափարի բացահայտման համար նախ անհրաժեշտ է նկատի ունենալ կրտսեր դպրոցականների բազմաբնույթ մտածողության տեսակները, սովորողներին ընձեռել ազատ մտածելու, դատողություններ անելու, սեփական կարծիքն արտահայտելու հնարավորություն, կարևորել աշակերտների պահանջմունքներն ու հուզող խնդիրները,

[6] Գյուլամիրյան Ջ.,Մայրենիի ուսուցման մեթոդիկա,Զանգակ, Երևան,2018,էջ 158

մասնավորապես զգացմունքների և երևակայության ինքնատիպությունը[7]։

Զրույցի բոլոր տեսակներն էլ նպաստում են սովորողների ընթերցողական կարողության զարգացման արդյունավետությանը։ Ունկնդրած ստեղծագործության բովանդակության և գաղափարի ըմբռնմանը խթանող զրույցը, որը մեծապես նպաստում է շահագրգիռ ընթերցանությանը նախապատրաստական զրույցն է։ Այս զրույցի հիմնական նպատակը ունկնդրվելիք նյութի հիմնական իմաստը գաղափարը հասկանալու համար հիմք ստեղծելն է։ Նախապատրաստական զրույցը համընկնում է քննադատական մտածողությանը նպաստող ԽԻԿ համակարգի խթանման փուլին։

Ստեղծագործության ընթերցումից առաջ զրույցի անհրաժեշտության մասին նշել է նաև Խ. Աբովյանը։ Նա զրույցի միջոցով առաջարկում է լուծել երկու խնդիր՝ ընթերցողին նախապատրաստել ստեղծագործության գաղափարի ընկալմանը և ստեղծագործության բովանդակության ըմբռնման համար իմաստավորել երեխաների կենսափորձը”։

Գրական տարրական գիտելիքների ուսումնասիրումն իրականացվում է մայրենիի դասի ընթերցանության փուլում՝ ունկնդրած բնագրի շուրջ աշխատանքի ընթացքում։ Առաջարկվում է գրական գիտելիքների ձեռքբերման գործընթացի հետևյալ փուլերը․

1. գրական նախնական գիտելիքների ձեռքբերում,
2. գրական տարրական գիտելիքների յուրացում։

[7] Գյուլամիրյան Ջ.,Մայրենիի ուսուցման մեթոդիկա,Զանգակ, Երևան,2018,էջ 160

Առաջինի մեջ մտնում են վերնագրի, բառի գեղարվեստական արժեքի, տեքստի և թեմայի մասին գաղափարի ու դրանց ըմբռնման հետ կապված կարողությունն ու զարգացումը:

Գրական տարրական գիտելիքների մեջ մտնում են հիմնական մտքի գաղափարի, ենթատեքստի, գործող անձանց՝ կերպարների մասին գիտելիքների ու կարողությունների ձևավորումն ու զարգացումը դասարանից դասարան»[8]:

Գրական տարրական գիտելիքների բովանդակությունն ու ուսումնասիրման հաջորդականությունը երկրորդից չորրորդ դասարաններում հետևյալն է՝ կերպարների էության բացահայտում, գաղափարի բացահայտում, ենթատեքստի բացահայտում: Դասարանից դասարան ավելի են շատանում կերպարները ճանաչելուն, նրանց էությունը քննարկելուն, դեպի ստեղծագործության գաղափարը տանելուն միտված հարցերն ու առաջադրանքները: Կերպարների նկարագրերի շուրջ աշխատանքը իրականացվում է դեռևս առաջին դասարանից, սակայն այդ աշխատանքն ավելի իմաստալից սկսվում է իրականացվել երկրորդ դասարանից:

Ունկնդրած բնագրի շուրջ վերլուծական աշխատանքի գերխնդիրը կերպարների կրած գաղափարների միջոցով հիմնական մտքի բացահայտումն է, որը տարրական դասարաններում հիմնականում իրականացվում է մայրենիի դասագրքերի մեթոդական կառույցների բաղադրամասերի միջոցով»:

Ունկնդրած բնագրի շուրջ վերլուծական աշխատանքի գերխնդիրը կերպարների կրած

[8] Տեր-Գրիգորյան Ա, Հայոց լեզվի մեթոդիկա, Լույս, Երևան, 1980, էջ 102-103

գաղափարների միջոցով հիմնական մտքի բացահայտումն է, որը տարրական դասարաններում հիմնականում իրականացվում է մայրենիի դասագրքերի մեթոդական կառույցների բաղադրամասերի միջոցով:

Տարրական դասարաններում բազմակի ընթերցանության արդյունավետության հիմնական գործոնը ստեղծագործության հիմնական գաղափարի բացահայտումն է: Բազմակի ընթերցանությունը նպաստում է ոչ միայն կարդալու կարողության ձևավորմանը, այլ նաև ստեղծագործության հիմնական գաղափարի բացահայտմանը: Այս աշխատանքն իրականացնելիս ուսուցիչը շեշտադրվում է աշակերտների տրամաբանական, վերլուծական մտածողության ակտիվացմանը, որն էլ աշակերտներին կամաց-կամաց տանում է ստեղծագործության հիմնական գաղափարի բացահայտմանը:

Ստեղծագործության բազմակի ընթերցանությունն իրականացվում է կարդալու տարբեր տեսակներով՝ հետևյալ հաջորդականությամբ.

- շարունակելով,
- կանգառներով,(մեկնաբանելով)
- ընտրովի,
- դերերով[9]:

Բացատրական ընթերցանության մեթոդի՝ «Աշխատանք բնագրի շուրջ» բաղադրամասի մեթոդապես ճիշտ իրականացումը լուծում է այն խնդիրը, որ երեխան ոչ թե պասիվորեն ընկալի այն, ինչ կարդում է, այլ «իր վրա վերցնի» ունկնդրածն իմաստավորելու, նրա մեջ գաղափար դնելու առաջատար դերը: Տարրական դպրոցի մայրենիի

[9] Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Զանգակ, Երևան, 2018, էջ 124

դասագրքերում ընթերցանության համար նախատեսված յուրաքանչյուր նյութի շուրջ պիտի իրականացվի նպատակասլաց աշխատանք[10]:

Բնագրի հասկացման առաջին խնդիրն անծանոթ բառերի որոշումն ու դրանց իմաստների բացատրությունն է:

Երկրորդ խնդիրը լեզվարտահայտչամիջոցների ճանաչումն է, իմաստի ըմբռնումը. այս աշխատանքի ճիշտ կազմակերպումն աստիճանաբար կնպաստի ծանոթ արտահայտամիջոցները սեփական խոսքում գործածելուն:

Նշված երկու խումբ խնդիրների լուծումը կնպաստի, որ աստիճանաբար անցում կատարվի երրորդ՝ «ունկնդրած բնագրի հասկացման քայլին», սա կնպաստի «թաքնված», մտքերը կռահելու աշակերտի կարողության ձևավորմանը:

Ունկնդրածը հասկանալու, հեղինակի, գործող անձանց հետ երկխոսության մեջ մտնելու կարողության ձևավորման գործընթացում կարևոր են ունկնդրած բնագրի վերաբերյալ հատուկ նպատակով կազմված հարցերը, որոնք ուղղակիորեն կամ «թաքնված» օգնում են աշակերտներին ՝ հասկանալու բնագրի յուրաքանչյուր նախադասության միտքը, ապա ստուգելու իր տեսակետը՝ կարդալով տեքստի շարունակությունը[11]:

Բնագրի հիմնական գաղափարի հասկացումը մեծապես կախված է ուսուցչի մեթոդապես ճիշտ կազմակերպված աշխատանքից: Սակայն պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ

[10] Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Զանգակ, Երևան, 2018, էջ 131
[11] Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Զանգակ, Երևան, 2018, էջ 133-160

ստեղծագործության հիմնական գաղափարը պետք չէ պատրաստի մատուցել երեխաներին[12]:

Գաղափարի բացահայտմանը, ինչպես Բելինսկին է նշել, «կենդանի կիրք է, վառ արտահայտված պաթոս»: Կարծում ենք, որ այդ կիրքն ու պաթոսն էլ դառնում են գաղափար: Երբ դասանյութն անձնային նշանակություն չի ստանում աշակերտի համար, նա լավագույն դեպքում լսողի կամ դիտողի տեսք է ընդունում: Հետազոտական ռեֆլեքսն սկսում է գործել միայն այն ժամանակ, երբ աշակերտի մեջ առաջանում է հետաքրքրություն, տարակուսանք, կասկած, զարմանք, ենթադրություն և այլն:

Ունկնդրած ստեղծագործության վերլուծության ժամանակ պետք է աշակերտների ուշադրությունը ուղղորդել հերոսների, հեղինակի գործածած բառերի, լեզվաարտահայտչամիջոցների վրա:

Բնագրի ճիշտ հասկացման համար կարևոր նշանակություն ունի **բնագրի վերլուծությունը**: Դրա համար աշակերտներին պետք է սովորեցնել տեքստում հաջորդաբար առանձնացնել բանալի հատվածները, այն կերպարները, բառերը, որոնք արտահայտում են հերոսների գործողությունների հիմնական դրդապատճառները: Հաջորդ քայլում անհրաժեշտ է որոշել բնագրի բանալի բառերը, որոնց օգնությամբ հնարավոր է բացահայտել հերոսների, գործողանձանց հիմնական միտքը[13]:

Կերպարների շուրջ վերլուծական աշխատանքը պետք է իրականացնել հետևյալ քայլերով.

ա) ստեղծագործության մեկնաբանելով և ընտրովի ընթերցանություն՝ նախապես մշակված

---

[12] Սիմոնյան Վ., Գրական տարրական գիտելիքները որպես կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողության ձևավորման հիմք, Երևան, 2016, էջ 133-134

[13] Գյուլամիրյան Ջ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Զանգակ, Երևան, 2018, էջ 144

հարցերով,

բ) ստեղծագործության գործող անձանց և կերպարների որոշում, դրանց դերի և նկարագրի ճշգրտում,

գ)դեպքերի դիտարկում,կերպարների դրական կամ բացասական նկարագրի հիմնավորում,

դ) դիտողությունների, եզրահանգումների դիտարկու[14]:

Կարևոր աշխատանք է նաև բնագրի վերարտադրումը,ամեն ինչ պետք է անել ,որպեսզի աշակերտները պատմվածքը վերարտադրեն ոչ թե անգիր,այլ հասկանալով:

Դրան հասնելու համար աշակերտների մոտ պետք էզարգացնել դատողություններ անելու, վերլուծելու,համադրելու կարողություններ:

Ունկնդրած ստեղծագործության հիմնական մտքի բացահայտումն արդյունավետ է իրականանում փոխներգործուն մեթոդների կիրառման շնորհիվ: Այս մեթոդների կիրառման շնորհիվ գործընթացը դառնում է աշակերտակենտրոն: Աշակերտների գիտակցությանը պետք է հասցնել, որ ստեղծագործության հիմնական գաղափարը ոչ թե պետք է որոնել ինչ-որ էջում պատրաստի, այլ արտահայտված կենդանի պատկերներով: Աշակերտները առանց դժվարանալու կարողանում են կատարել Վենի դիագրամ և Քառաբաժան մեթոդական հնարները: Այս աշխատանքները աշակերտների գործունեությանը տալիս է կշռադատելու հնարավորություն, աշակերտները իմաստավորում են ունկնդրածի բովանդակությունը և որոշում գաղափարը[15]:

[14] Գյուլամիրյան Ջ.,Մայրենիի ուսուցման մեթոդիկա,Զանգակ, Երևան ,2018,էջ 156

[15] Գյուլամիրյան Ջ.,Մայրենիի ուսուցման մեթոդիկա,Զանգակ, Երևան ,2018,էջ 136-138

Ունկնդրած ստեղծագործության գաղափարը բացահայտելու կարողության ձևավորման գործընթացի քայլերն են.

- ստեղծագործության բազմակի ընթերցում նպատակային հարցադրումներով և առաջադրանքներով,
- ստեղծագործության մեջ ներկայացված դեպքերի և կերպարների գործողությունների պատճառահետևանքային կապերի բացահայտում, շարժընթացի տրամաբանության ըմբռնում,
- վերը նշված գործընթացներում ստեղծագործության հերոսների դերի բացահայտում՝ նրանց արտաքինի, բառապաշարի, միջավայրի վերլուծության ճանապարհով,
- հեղինակի՝ հերոսների նկատմամբ ունեցած վերաբերմունքի դիտարկում՝ հիմք ընդունելով ստեղծագործության յուրաքանչյուր տարր,
- ստեղծագործության գլխավոր մտքի գաղափարի բացահայտում, ըմբռնում, սեփական դիտանկյունից քննարկում, դատողությունների ձևակերպում[16]:

[16] Գյուլամիրյան Ջ.,Մայրենիի ուսուցման մեթոդիկա,Զանգակ, Երևան,2018,էջ 164-165

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

Ներկայացնում եմ ունկնդրման դասի մեկ օրինակ

**Դասարան 1-ին**

**Առարկա՝ Մայրենի**

**Դասի թեման՝ Աշնան նկարը բանաստեղծության ունկնդրում**

**Նպատակը՝** Աշակերտները կզարգացնեն աշնան մասին ունեցած գիտելիքները

**Ածանցյալ նպատակը՝**

Զարգացնել աշակերտների բազմաբնույթ մտածողությունը

Աշակերտները՝

- Կորոնեն և կգտնեն տեղեկություններ աշնան մասին
- Կդրսևորեն դրական վերաբերմունք բնության հանդեպ
- Կկատարեն աշնանային ներգեր
- Կզարգացնեն ստեղծագործական կարողությունները

Դասի կահավորումը՝ բնանկարներ, քարտեր, աշնանային վառ գույներով ծառի պատկեր

**Դասի ընթացքը՝**

**Ընթացքը՝**

Ընթերցել ՝ **Աշնան նկարը** բանաստեղծությունը:

Հաղորդել տեղեկություններ ՝ **Տարվա եղանակների և աշնան ամիսների** մասին:

Երկխոսություն աշակերտների հետ Բանաստեղծության մեջ ինչպիսի գույներ են հիշատակվում:

Աշակերտներին տրամադրել բնության ուրվագծային պատկեր և հանձնարարել ներկել այն աշնան գույներով:

**Հիմնական արդյունքները**

**Զարգացնել բազմաբնույթ մտացողությունը**

**Լեզվական մտածողություն**

- Ի՞նչ եք հասկանում աշուն ասելով;
- Ներկայացրեք աշունը բնութագրող բառեր:

**Տրամաբանական-մաթեմատիկական մտածողություն**

- Քանի՞ ամիս ունի աշունը:
- Ի՞նչ եք տեսնում ձեր շուրջը, որը հուշում է աշնան գալուստը:

**Միջանձնային մտածողություն**

- Որո՞նք են աշնան առանձհատկությունները:
- Տեղեկություն հաղորդե՛ք նրանց մասին:

**Տարածական մտածողություն**

Նկարե՛ք աշնանային պատկեր և ներկայացրե՛ք:

**Երաժշտական մտածողություն**

Աշնան մասին երգի ունկնդրում

**Տնային հանձնարարություն**

Նկարել աշնանային պատկեր

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Անձի զարգացման, նրա արժեքային համակարգի, մտածողության ձևավորման գործում մեծ դեր է կատարում գրական ունկնդրումը: Գեղարվեստական ստեղծագործությունների հերոսների արարքների, դատողությունների վերլուծությունը, պատմումը դպրոցականների մեջ որոշակի արժեքների ստեղծման կարևոր ազդակ է դառնում:

Ընթերցած ստեղծագործության մեջ կերտված կերպարների գործունեությունը, նրանց զգացմունքային ապրումները սերտորեն առնչվում են ինչպես աշակերտի ինքնարտահայտման, այնպես էլ ուսումնական-ստեղծագործական գործունեության հիմքերին:

Ընթերցելու մեթոդիկայի ճիշտ ընտրությունը նպաստում է կապակցված խոսքի զարգացմանը: Կապակցված խոսքի ստեղծումը խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների բարձրակետն է, որովհետև այդ ուղղությամբ տարվող աշխատանքների վերջնական նպատակը աշակերտների մեջ կապակցված խոսք ստեղծելու կարողության ձևավորումն է: Խոսք կառուցելու կարողության մշակման տեսակետից օգտակար են ինքնուրույն ընթերցանությունն ու դրան հաջորդող փուլը՝ պատմումը, որը հնարավոր է իրականացնել նույնիսկ դասագրքում եղած թեմատիկ նկարների շուրջ կապակցված պատմությունների ստեղծման, տեսածի ու լսածի, զգացածի ու խորհածի վերարտադրման միջոցով: Այս բոլոր դեպքերում երեխաներն ստիպված են լինում կապակցված ձևով ու որոշակի համակարգով ընթերցել ու խոսք կառուցել: Ուսումնասիրվող յուրաքանչյուր նյութ աշակերտների կողմից

պետք է ամբողջությամբ վերարտադրվի, որպեսզի նրանք սովորեն նյութի հաջորդականությունը պահպանել, հետևել դեպքերի ու դեմքերի տրամաբանական զարգացմանը, կարողանան կապակցված ու ավարտուն խոսք ասել:

Առաջին դասարանում գրական ունկնդրումները ցույց են տալիս, որ գեղարվեստական բնագրի ընթերցումը պետք է կազմակերպվի որոշակի մեթոդներով, որպեսզի անարդյունավետ ու ձանձրալի չլինի: Սովորաբար ընթերցանության մեթոդի բաղադրատարրեր են դառնում`

- զրույցը,
- բնագրի ընթերցումը,
- բառային աշխատանքը,
- պատմումը,
- ամփոփումը:

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Գյուլամիրյան Զ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006:
2. Գյուլամիրյան Զ., Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Զանգակ, Երևան, 2018
3. Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., Ընթերցանության դասաժամերի դերը ինքնուրույն գործունեության կազմակերպման և մտածողության զարգացման գործում // «Նախաշավիղ», Երևան, 2010, N6:
4. Խաչատրյան Ս., Արտահայտիչ ընթերցանության և բանավոր խոսքի ուսուցումը տարրական դասարաններում, «Նախաշավիղ» հանդես, Երևան, 1.2013:
5. Սիմոնյան Վ., Գրական տարրական գիտելիքները որպես կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողության ձևավորման հիմք, Երևան, 2016
6. Տեր-Գրիգորյան Ս., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980:
7. Гез Н. И. Методика обучения иностранным языкам в высшей школе. М. 1979
8. Зинченко В. П. В восприятие как действиея Международный психологический конгрессб симпозиум 30, 1966էջ 61